«Խնամի դու խոշ ես եկել,
Դարդակ ու բոշ ես եկել,
Երկու բլոճ ես բերել,
Էն էլ ճամբին ես կերել.
Բերածդ է կանանչ կապայ
Թևերն ու փէշը ծակ ա.
Խնամի, դու խոշ ես եկել,
Դարդակ ու բոշ ես եկել [1]։

Այդ տեսակ վիրաւորանքներից մէկն էլ «քոլոզ» փախցնելն է, որ, ինչպէս մեզ արդէն յայտնի է, տեղի է ունենում Բուլանըխում։ Գլխարկ փախցնելու սովորութիւնը զարմանալի նմանութեամբ գոյութիւն ունի նաև Կովկասում Օսերի մէջ [2]։ Նոյն Բուլանըխում, երբ հարսնածի խումբը իջևանում է հարսի գիւղում, «հարսնած հիւրասիրող տանտէրերը մեծ զգուշութիւն կըբանեցնեն, թէ նամի մարդիկը հարսնածի ձիերու պոչերը չկարեն, որ մեծ անպատուութիւն և անարգանք է, և ինչպէս շատ անգամ պատահել է, այդ կերպ անարգուած անձինք սրտի կսկիծէն մեռեր են»։ Նոյն կեղծ վիրաւորանքի պատկերն է ներկայացնում Բուլանըխում կատարուող հետևեալ սովորութիւնը։ «Թափորից դուրս, երեխայքը երեսներին ալիւր քսած տեսակ տեսակ ծամածռութիւններ ու միմոսութիւններ անելով կըվազվզեն այս ու այն կողմը. փեսայի մերձաւորներից մէկը, իշու վրայ հեծցնելով՝ պոչը կուտան ձեռքը ու չորս կողմից ձնթոփ ու քարէ կոշտեր կուտան հա կուտան խեղճի գլխուն ու արևուն, բայց նա ոչ ոքի խաթրին չդիպչի հասարակութեանը զուարճութիւն պատճառելու համար» [3]։

Զէյթունում, երբ հարսին դուրս կըտանեն տանից,

---

[1]) Քաջբերունի՝ Հայկական սովորութիւններ—«Ազգագրական Հանդէս» 1901 թ. գիրք VII և VIII

[2]) Максимъ Ковалевскій—Древній законъ и современный обычай, т 1 стр. 250.

[3]) Բուլանըխ,—Ազգագր. Հանդէս, 1899 թ. գիրք Ե.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան